


Բրիճձ	800 000	ՔԻԷ
Կարազ	300 000	»
Պատւ. շնոր	3 000 000	»
Խաղաղ	7 000 000	»

Կ'արտածեն նաեւ ամէն տարի գրեթէ 100 000 ոչխար, 200 000 այծու մորթ, 20000 եզան մորթ: Արմտեաց արտածու թիւնն կը համարուի 4 000 000 թիւ: Պաշտօնական տեղեկութեան մը համեմատ 1893ին արտածուած է 12,500 000 ֆրանկէն աւելի արժողութեամբ ապրանք: Ներմուծուած ապրանքներու արժէքն ասիւ աւելի է. նիւթերն են, շաքար, սուրճ, բամբակեղէն և բրդեղէն լաթեղէնք, եւրոպական չուխայ, ֆէս, երկաթ, պողպատ, զանազան մետաղք, քարիւղ, և այլն: Անկիրիոյ աւրուեստական արտադրութեանց մէջ ժամանակաւ մեծ շահու զուռ էր պրօնի կամ թիֆլիսի պատրաստութիւնն, ինչպէս նաեւ տեղական զործուած շալիներն. այս երկու արհեստներն եւս այժմ ինկած են: Նշանաւոր է Անկիրիոյ խճուղն (սուճուղ) և ապուխտն (պաստրմա). անուանի են նաեւ գինին և օղին:

Անկիրիան այժմ սկսելով կապուիլ երկաթուղւոյ գծերով Կ. Պոլսոյ և ուրիշ վաճառաշահ կեդրոններու հետ, իր վաճառական շարժումն եւս օր ըստ օրէ առաւելլու վրայ է. այս պատճառաւ կարելի է որ քաղաքն եւս զարգանայ և բարգաւաճի և մէկ խօսքով զարթնու իր արեւելեան քաղաքաց յատուկ խորունկ ճունէն: Տփղիսաբնակ ուսու լուսանկարին Երմակով, լուսանկարած է Անկիրիոյ 130էն աւելի տեսարաններն և բազմաթիւ հնութեանց լուսանկարները: — Տեղեկագր. Գաղատիոյ, 1873, 1—78: Տեղգր. Հայս. 48—52: Քիճե, Ա. 1867, էջ 257 և 247—284: Բազմավեպ, 1899, էջ 27, 137, և այլն:

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՓՐԵՍԻԱՆ



ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԵՐԳԸ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Փ ՈՒԱԳՐՈՒԻՆՔ վայրկեան մը երևակայութեամբ Պաղեստինու խոնարհ բարձունքը, և երազելով մեր քայլերը Բեթզեհէի շրջակայ հովիտներու մէջ, փութանք զկպ ի Մուրը, ուր երկնի և երկրի արարիչ Աստուած մը կը հանգչի: Գիշերային թանձր ստուերաց մէջ, անըմբռնելի պայծառութիւն մը յանկարծ կը շլացնէ զմզ, և մերձակայ բլուրներ ու ձորեր կը կրկնեն փոխի ի փոխ ներդաշնակ նուագ մը, հրեշտակային քնարներու թրթռուցներէ յառաջ եկած: Քսան զարեւ այդ գիշերն ի վեր թռան երկրիս երեսն և մենք զեռ կը լսենք այդ երգը, և որուն զեռ եւս արձագանգ կ'ըլլանք, ապագայ զարեւու զայն աւանդելով: Ամենահին յիշատակաց մին է այդ, զոր ժողոված ենք նորածին եկեղեցիին, և որ զարեւու ընծացքին, մի քանի պատիկ յաւելուածներ կամ փոփոխութիւններ կրած է միայն: — Այդ յաւելուածներն ու փոփոխութիւնք պիտի ըլլան առարկայ հետազոտութեանցս:

* *

Մոյն երգը՝ որ Յունաց ծանօթ է «Մեծ փառաբանութիւն» Μεγάλη δοξολογία աւուամբ, լատին եկեղեցւոյ մէջ մերինն նման կը կոչուի պարզապէս «Փառք ի բարձունս» Gloria in excelsis իւր առաջին բառերով. Ասորիք աւելի եւս համառատութեամբ կը գոհանան միայն առաջին **ՆԱԽՅԱԼ** (Թիշպուխթա=Փառք) բառով. և ամէն ազգեր կը միաբանին հասարակաց անուամբ մը պաւ:

1. Այսպէս կը կոչուի՝ փոքր կամ համառատ փառաբանութիւնն, որ է «Փառք Հօր» և այլն, զանազաներու համար: Ուրիշ անգամ թերեւս առիթ կ'ունենանք ասով եւս զբարեկուս:

առեկու զայն «Հրեշտակային փառատարութիւն կամ Երգ» անուանելով¹։

Սոյն երգիս, իբր ամենահին յիշատակութիւն մը, առաջին անգամ կը հանդիպինք Հռովմայ Եկեղեցւոյ Հին քահանայապետական զրբի մը մէջ (Liber Pontificalis), ուր Ս. Թեղեոփորոսի վարուց մէջ ծանօթութիւն մը կ'աւանդուի, իբրեւ թէ Ս. Հայրապետս, ի Հռովմ մուծած ըլլայ այս երգիս գործածութիւնը պատարագի մէջ ծննդեան տօնին օրը միայն։ Այս ժամանակս՝ մերձ 135 տարւոյն², զեռ եւս Հռովմայ եկեղեցական շեղուն յունարէնն էր։

Եթէ Հաւատանք եկեղեցական նախնի հեղինակաց, «Փառք ի բարձունս»ի այլմեան վիճակը կը սեպհականութի Ս. Իլարիոնի (S. Hilaire de Poitiers † 367), որ շարադրած (կամ լաւ եւս՝ ինչպէս ստոյգ կ'երեւի, լրացուցած) է զայն յետ դարձին յԱրեւելս աղբորմանն։

Այս երկու ժամանակաց մէջ չկայ պատմական յիշատակութիւն մը երգիս նկատմամբ։ Ինչ էր Ս. Թեղեոփորոսի ժամանակ. ինչ փոփոխութիւններ կրեց մինչեւ ցուրդն իլարիոնի։ Կամ ուրիշ կերպ ըսելով, ինչ էր իր նախնին վիճակը. ինչպէս ձեւացած է այլմեանը։

Քննութեան տալ Հաւաքները բնագիրները և Համեմատները իրարու հետ։

Բնագիրը՝ զոր կը գործածեն մի քանի պզտիկ զանազանութեամբք Հռովմէական և

բիզանդական եկեղեցիք, առաջին անգամ կը գտնենք Հռչակաւոր Աղեքսանդրեան ձեռագրին մէջ, Ս. Գրոց յունարէն թարգմանութեան մը վերջը դրուած։

Ասոր նման կ'երեւի Առաքելական Սահմանադրութեանց է զրբին աւանդածը³, որ քիչ մը արիոսեան զաղափորաց միտել կը թուի։

Վերջապէս, երրորդ բնագիր մը՝ առաջինն երէն աւելի պարզ, բայց աւելի մերձաւոր Առաքելական Սահմանադրութեանց աւանդածին, երկար ժամանակ ի գործածութեան եղած է Միլանո Ամբրոսեան արարողութեան մէջ. և արդէն իսկ չորրորդ զարու վերջերը կամ ի սկիզբն Հինգերորդին, մի քանի յաւելումներ ընդունած է, ինչպէս քիչ վերջը պիտի տեսնենք⁴։

Յաւելով ասոնց վրայ Հայերէն բնագիրն (ըստ օրինակի նորատիպ ժամակարգութեան) և Ասորերէնն, ասորի ժամագրքէ մը քաղելով, համեմատել ամէր միասին, ցունել ինչ որ կայ անոնց մէջ հասարակաց, փոփոխութեանց տարբերութեանց պատճառները, և հուսկ՝ ծիսագիտական ակնարկ մը տալ տոյն հրեշտակային երգի այլ և այլ եկեղեցեաց մէջ գործածութեան ժամանակին ու կերպին, ահաւասիկ բոլոր այս համառոտ ուսումնասիրութեան նիւթը։

Հ. Յ. ԱԿԳԵՐԵԱՆ

Շարադարեի

1. Մեր մէջ ի զբաղմունք յաճախած կը գտնենք նաեւ Օրմնոսարին փառաց անուանակոչութիւնը։

2. Իիդերեան ցոցակի մէջ (ձեռագիր 354ին գրուած) Ս. Թեղեոփորոսի ժամանակը ստուգապէս կը սահմանուի. Fuit temporibus Antonini Macrini (կամ Marci) a cons. Titiani et Gallicani (127) usque Cæsare et Balbino (137). (Duchesne. Liber Pont. I. էջ 2-5)։

3. Steu Migne. Patr. Graec. I, 1058. Նոյնպէս Mansi. SS. Conc. Nova Collectio, I, էջ 529։

4. Հմտ. Revue du Chant Grégorien, Grenoble; փետր. և ապրիլ 1897. Հ. Տոմ Փոթէի յօդուածները. և չեկտ. 1898, Տոմ Ժանաւրի յօդուածը Chants ambrosiens et Grégoriens. Հրատարակեալ է Հ. Մալլարէ, Է Solesmes։

